ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1130 - Ա

ՄԱՆՎԵԼ ՔԵՇԻՇՅԱՆԻՆ ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, 29-րդ հոդվածով և հիմք ընդունելով կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշումը՝

1. Վարչապետի աշխատակազմի ռազմավարական հաղորդակցության վարչության պետ Մանվել Քեշիշյանին 2025 թվականի դեկտեմբերի 8-10-ը ներառյալ գործուղել Բելգիայի Թագավորություն (Բրյուսել)՝ ԵՄ ԱԳԵԾ և Ընդլայնման և Արևելյան հարևանության հարցերով գլխավոր տնօրինության կողմից համատեղ կազմակերպվող՝ Արևելյան գործընկերության անվտանգության և պաշտպանության վերաբերյալ աշխատաժողովին մասնակցելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին՝ սահմանված կարգով ապահովել Մանվել Քեշիշյանի՝ Բելգիայի Թագավորություն (Բրյուսել) գործուղման օրապահիկի ծախսերի հատուցումը:

3. Ընդունել ի գիտություն, որ գործուղման մյուս ծախսերն իրականացվելու են հրավիրող կողմի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ